677 Ծնկի եկած Գեթսեմանի պարտեզում՝

1. Ծնկի եկած Գեթսեմանի պարտեզում՝
Տեր Հիսուսը Հայր Աստծուն էր աղոթում,
Խոնարհությամբ Հոր կամքին էր հանձնվում,
Ինչպես արյուն՝ քրտինքն էր դեմքից թափվում:
Հոգին մահվան չափ տրտմած էր,
Աղերսում էր տագնապով.
- Հա՛յր, հեռացրո՛ւ այս բաժակը,
Բայց թող լինի Քո կամքը:

2. Գողգոթայում խաչի վրա գամված էր Նա,
Մեր մեղքերի պատիժն էր կրում Իր վրա,
Խոցված կողից արյուն ու ջուր էր հոսում,
Մեր մեղքերին թողություն էր շնորհում:
Սեր էր բխում լույս հայացքից,
Խնդրում էր, բարեխոսում.
- Հա՛յր, ների՛ր, որ չեն հասկանում,
Չգիտեն՝ ինչ են անում: